

# ՀՈՒՎԱԾՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԴՈՒՄԱՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1972—1982 թթ.)

## Կ. Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

1970-ական թվականների սկզբներին ԱՄՆ-ի էթնիկական կյանքում տեղի ունեցած խոշոր փոփոխությունները և ազգային փոքրամասնությունների սոցիալ-մշակութային զարգացմանը նպաստող օրենսդրության ընդունումը էապես ակտիվացրին ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև ամերիկահայերի հասարակական-քաղաքական ու կրթամշակութային գործունեությունը: Ազգային ինքնագիտակցության աճը, սեփական արմատներին, պատմության և մշակույթի նկատմամբ հետաքրքրության մեծացումը ամերիկյան ուժացնող հասարակության ներսում զգալիորեն ընդլայնեցին ձուլման վտանգի դեմ պայքարելու հայ համայնքի հնարավորությունները և առաջ քաշեցին հայ ազգային արժեքները, մշակույթն ու լեզուն պահպանելու անհրաժեշտությունը: Դա հատկապես վերաբերում էր ամերիկյան ծագում ունեցող հայերին, քանզի հենց այդ սերունդն էր, որ կորցրել էր կապը ազգային արմատների հետ:

Ամերիկահայ համայնքի զարգացումը բնորոշող վերոհիշյալ միտումներով էր պայմանավորված 1972 թվականին «Ամերիկայի հայկական համագումար» կազմակերպության ստեղծումը, որը դաշնակցային մակարդակում գրանցված է իբրև կրթամշակութային և բարեգործական հիմնադրամ և որի պաշտոնական նպատակներն են նպաստել ԱՄՆ-ում հայ մշակույթի և հոգեվոր արժեքների պահպանմանն ու տարածմանը և հայեցի կրթությանը: Այս նպատակների իրականացմանն էր ուղղված կազմակերպության «գիտահետազոտական» ծրագիրը, որը նախատեսում է ուսումնասիրություններ Հայոց ցեղասպանության, ամերիկահայ համայնքի, առհասարակ Սփյուռքի զարգացման հեռանկարների շուրջ: Գիտակրթական և մշակութային լայն գործունեություն ծավալելու համար Հայկական համագումարն իրականացնում է հետազոտական և հրատարակչական հսկայական աշխատանքներ, պետական կառույցներից ձեռք է բերում և հայ համայնքի կարիքների համար տրամադրում խոշոր նպաստներ, կազմակերպում այլազան թեմաներով գիտաժողովներ և համաժողովներ: Գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են նաև հիմնադրամի կողմից իրականացվող մյուս՝ «կառավարական», «հասարակական» և «ուսանողական» ծրագրերի գործունեության պահպանմանը:

Հայկական համագումարը հրատարակել է մի շարք հետազոտական ձեռնարկներ և տեղեկատուներ, որոնք այս կամ այն չափով շոշափում են ամերիկահայերին հետաքրքրող տարբեր խնդիրներ: Այս առումով խոշոր գիտա-

\* Կազմակերպության «կառավարական» և «հասարակական» ծրագրերին տեղադրված ենք առանձին հոդվածներով (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, հ. 2 և 1998, հ. 1):

հետազոտական և ժողովրդագրական արժեք է 1976 թ. կազմակերպության հրատարակած «Ամերիկյան և կանադական գիտական հաստատությունների հայ գիտնականների տեղեկագիրը», որը տարբեր բնույթի տեղեկատվական տվյալներ է պարունակում Հյուսիսային Ամերիկայի շուրջ 1500 հայ գիտնականների մասին: Հետազոտությունն իրականացրել է Հայկական համազումարի հրատարակչական կոմիտեն, որի կազմում ներգրավված էին ամերիկահայ նշանավոր մտավորականներ՝ Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ դոկտոր Ավետիս Սանջյանը, Դեյտոնի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր, դոկտոր Հակոբ Ներսոյանը, իրավագետ Հայկ Տեր-Մանվելյանը և Միչիգանի համալսարանի Ռուսաստանի պատմության պրոֆեսոր, Հայկական համազումարի համանախագահ, դոկտոր Դենիս Փափազյանը: Տեղեկագրի հրատարակչական ծախսերը հոգացել էր Հայ բարեգործական ընդհանուր միության «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամը, իսկ հետազոտությունը ֆինանսավորել էին հիմնադրամի հիմնական խնամակալներ Սթիվեն Մուգարը և Հրայր Հովնանյանը<sup>1</sup>:

«Գիտնականների տեղեկագրում» տվյալներ են հաղորդվում ԱՄՆ-ի և Կանադայի հայ մտավորականության մասին՝ ըստ գիտության ճյուղերի, քուլեջների և համալսարանների, ըստ տեղաբաշխման աշխարհագրության, գիտական աստիճանների և կոչումների: Բացի դրանից, տրված է տվյալների տոկոսային արտահայտությունը, գիտնականների կենսագրությունը և հասցեները:

Այսպես, տեղեկագրի համաձայն՝ հայ մտավորականները կազմում էին հայ բնակչության ընդհանուր թվի (մոտ 450.000) 0,33 %-ը: Աշխարհագրական տեղաբաշխման ցուցանիշները ցույց էին տալիս, որ ամերիկահայ գիտնականների ամենամեծ խումբը՝ 565 հոգի, կենտրոնացած էր ԱՄՆ-ի հյուսիսարևելյան շրջաններում (ԱՄՆ-ի հայ գիտնականների 45 %-ը): Դրանց հաջորդում էին արևմտյան նահանգները՝ 275 հոգի (22 %), միջին արևմուտքը՝ 254 (20 %), հարավ-արևելքը՝ 50 (4 %) և Կանադան՝ 48 (3,8 %): Առանձին նահանգների ցուցանիշներով առջևում էր Կալիֆոռնիա նահանգը, որտեղ հայ գիտնականների թիվը հասնում էր 243-ի (ընդհանուր թվի 19,4 %-ը): Կալիֆոռնիային հաջորդում էին Նյու Յորքը՝ 209 (16,7 %), Մասաչուսեթսը՝ 186 (15 %), Միչիգանը՝ 62 (5 %) և Իլինոյսը՝ 59 (4,7 %)²:

Ըստ «Գիտնականների տեղեկագրի»՝ հայ մտավորականության մեծ մասը ընդգրկված էր բժշկական (25 %) և բնական գիտությունների ու ճարտարագիտության (24 %) ասպարեզներում: Մեծ թիվ էին կազմում նաև հումանիտար (22 %) և հասարակական գիտությունների (14 %) մասնագետները: Շուրջ 1500 հայ գիտնականների 28 %-ն ուներ պրոֆեսորի, 16 %-ը՝ կրտսեր պրոֆեսորի, 31 %-ը՝ դոցենտի, 7 %-ը՝ ավագ դասախոսի և 18 %-ը՝ դասախոսի կարգավիճակ: Ձեռնարկում նաև նշվում էր, որ հայկական ծագում ունեցող մտավորականները կազմում են ամերիկյան գիտնականների ընդհանուր թվի մոտ 0,31 %-ը³:

1976 թ. ԱՀՀ-ն Լիբանանում տիրող դրության մասին պատրաստեց և հայ ու ամերիկյան մամուլին տրամադրեց հետազոտական և վերլուծական հեղվածների շարք, որտեղ վերլուծվում էր լիբանանահայ համայնքի կացությունը քաղաքացիական պատերազմի տարիներին, նրա պատմական անցյալն ու զարգացման հեռանկարները: Քննարկելով Լիբանանի քաղաքական

<sup>1</sup> Տե՛ս «The Armenian Observer», 1976, March 24.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, March 31:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, 1976, April 7:

դրույթունը և քաղաքացիական պատերազմի պատճառներն ու հայ համայնքի հասարակական-մշակութային կյանքի վրա նրա ունեցած ներգործությունը՝ հետազոտության մեջ եզրակացվում էր, որ հայերը «շահագրգռված են ազատ, միացյալ և բազմասամայնությունից աշխարհիկ լիբանանյան պետության ներսում... կայունության պահպանման մեջ»<sup>4</sup>։ Միաժամանակ այն կարծիքն էր հայտնվում, որ հայերը պետք է ձեռնպահ մնան լիբանանը լքելուց, քանի որ շուրջ 250.000 լիբանանահայերի արտագաղթի կազմակերպումը կապված էր մի շարք իրական դժվարությունների և վտանգների հետ։ Նախ, հատկապես դժվար էր հայերի անվտանգ տեղափոխումը մահմեդական տարածքների վրայով դեպի նավահանգստային կամ սահմանամերձ քաղաքները։ Ապա, գործնականում անհնար էր այդպիսի մեծ թվով մարդկանց տեղավորումը և կացարաններով, աշխատանքով ու անհրաժեշտ միջոցներով ապահովումը օտար երկրներում։ Եվ վերջապես, լիբանանահայության զանգվածային արտագաղթի դեպքում կիսամրեր Սփյուռքի քաղաքական, կրթական և մշակութային կարևորագույն օջախներից մեկը, ինչպիսին էր լիբանանը։ Այս պայմաններում, նշվում էր ձեռնարկում, սփյուռքահայ համայնքների կարևորագույն խնդիրն էր լիբանանի հայությանը խոշոր նյութական օգնության ապահովումը։ Այս մշակված ռազմավարության արդյունքը եղավ այն, որ 1978—1985 թթ. ընթացքում Հայկական համագումարը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության խողովակով լիբանանահայությանը ապահովեց 1.175.000 դոլարի նպաստ<sup>5</sup>։

Կազմակերպության կողմից իրականացվող հետազոտություններն ու ուսումնասիրությունները բազմազան են ու բազմաբնույթ։ Դրանք շոշափում են ամերիկահայ համայնքին հետաքրքրող զանազան խնդիրներ։ ԱՀՀ-ի կողմից իրականացված վերլուծական ուսումնասիրությունները սոցիոլոգիա տրամադրվում էին ամերիկահայ մամուլին՝ ընթացիկ իրադարձությունների և ռաջնահերթ խնդիրների վերլուծությունները հայ համայնքին հաղորդելու նրպատակով։ Այսպես, 1978 թ. կազմակերպությունը վերլուծական հոդվածաշար տրամադրեց հայ մամուլին՝ Ցեղասպանության արգելման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի վերաբերյալ<sup>6</sup>։

Հայկական համագումարի կարևոր խնդիրներից մեկը ամերիկահայ համայնքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների հավաքումն ու տարածումն է։ Այս տեսակետից աչքի է ընկնում 1981 թ. կատարված Կալիֆոռնիայի հայերի ժողովրդագրական ուսումնասիրությունը, որն իրագործվել է Լա Վեոնի համալսարանի պրոֆեսորներ, դոկտոր Հակոբ Տեր-Կարապետյանի և Արմինե Պրուդյան-Տեր-Կարապետյանի կողմից։

Ժողովրդագրական հետազոտության տեղեկագրում սոցիոլոգիական ընդհանուր տեղեկություններ էին պարունակվում Կալիֆոռնիայի հայ համայնքի վերաբերյալ, որոնք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ ա) ժողովրդագրական ընդհանուր տվյալներ (հայ բնակչության կազմը և շարժը), բ) դեպի էթնիկական արժեքները կողմնորոշված վարքագիծ, գ) էթնիկական ինքնագիտակցության հետ առնչվող վերաբերմունքներ և տեսակետներ։

Ժողովրդագրական տվյալներն առնչվում էին ընտանեկան կազմի, զբաղմունքների, եկամուտների, կրթության, Միացյալ Նահանգներում բնակվելու տևողության, հայ քաղաքական կուսակցություններում անդամակցության և կրոնական պատկանելիության հարցերի հետ։ Երկրորդ կատեգորիայի (էթ-

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, 1976, October 6:

<sup>5</sup> Տե՛ս «Armenian Assembly of America. Aims and Accomplishments», էջ 14:

<sup>6</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1978, January 12, 19:

նիկական վարքագիծ) տեղեկությունները վերաբերում էին ընտրությունների ընթացքում քվեարկություններին, համայնքային կազմակերպություններում անդամակցության, կամավոր աշխատանքներին մասնակցության, ամերիկահայ մամուլի ընթերցման և եկեղեցիների հաճախման հարցերին: Երրորդ խումբը (կարծիքներ և տեսակետներ) ընդգրկում էր այն խնդիրները, որոնք առնչվում էին Հայ Դատին և նրա լուծման հնարավորություններին, համայնքի առջև ծառայած խնդիրների առաջնահերթությունները, հայերի էթնիկական ինքնությունը կանխորոշող գործոններին, խառը ամուսնություններին, ընտանեկան ավանդույթներին ու հարաբերություններին և այլն:

Հետազոտության մեջ վերոհիշյալ թեմաների շրջանակներում համեմատություններ էին արվում տեղաբնակների և ներգաղթածների, ինչպես նաև երիտասարդ և տարեց սերունդների միջև: Ընդհանուր առմամբ երիտասարդների և տարեցների միջև ավելի շատ ընդհանրություններ էին բացահայտվում, քան՝ տարբերություններ: Մինչդեռ տարբերությունների հիմնական աղբյուրը բնակության տեղության ցուցանիշն էր. վերջին ժամանակներում և ավելի վաղ ներգաղթած ամերիկահայերի միջև կային ավելի մեծ ընդհանրություններ, քան, բնական է, նրանց և տեղաբնակների միջև: Այսպես, անդրադառնալով ներգաղթյալների և բնիկների միջև համեմատական վերլուծությանը, տեղեկագիրը նշում է.

ա) տեղաբնակ ամերիկահայերը գտնվում են ֆինանսական ավելի բարձր դիճակում, քան ներգաղթյալները (նորեկները),

բ) տեղաբնակները ձգտում են ստանալ բարձրագույն կրթություն և բարձրորակ մասնագիտություն,

գ) տեղաբնակների մեծ մասը շեղոք վերաբերմունք ունի հայ քաղաքական կուսակցությունների նկատմամբ, մինչդեռ նորեկներն առավելագույնս ներգրավված են կուսակցություններում,

դ) բնիկ ամերիկահայերի շուրջ մեկ երրորդը հայկական թերթեր ընդհանրապես չի կարդում, սակայն նրանք ավելի հաճախ են այցելում եկեղեցի,

ե) վերջին ժամանակներում ներգաղթածների մոտ 20 % -ը լիարժեք կերպով չի տիրապետում անգլերենին,

զ) տեղաբնակների մոտ կեսը և նորեկների մեկ երրորդը գտնում են, որ Հայ Դատն անհնարին է լուծել,

է) բնիկ ամերիկահայերն ու երիտասարդ սերնդի ներկայացուցիչները խառը ամուսնություններն ընդունելի են համարում:

Հետազոտության հաշվետվության մեջ պարունակվում էին նաև այլ օգտակար տեղեկություններ, որոնք լրացված էին հեղինակների հանգամանալից մեկնաբանություններով ու վերլուծություններով:

Այն, անշուշտ, ուներ գործնական նշանակություն, քանի որ կոչված էր հայկական բոլոր կազմակերպությունների ու անհատների համար ծառայելու իբրև տեղեկատվության արժեքավոր աղբյուր ամերիկահայ համայնքի բազմազան խնդիրների իրականացմանն ուղղված տարբեր ծրագրերի պլանավորման և ձեռնարկման ժամանակ: Հետազոտման հաշվետվությունը ծառայում էր նաև անկողմնակալ տեղեկագիր ոչ հայկական հաստատությունների ու ամերիկյան պաշտոնյաների համար: Այսպես, հետազոտության տեղեկագրի կրկնօրինակները տրամադրվել էին լրագրողներին, կառավարական հանձնաժողովներին և համայնքային հարցերով զբաղվող կազմակերպություններին<sup>7</sup>:

Հայագիտական ծրագրերն իրականացվում են ոչ միայն հատուկ հետա-

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, 1982, March 4:

գոտությունների ու հրապարակումների, այլև դրամական նպաստների ու գիտաժողովների միջոցով: Հայկական համագումարի գործունեության հիմնական ուղղություններից մեկը դաշնակցային և տեղական մարմիններից հայ համայնքի ու կազմակերպության կարիքների համար դրամական նպաստների ձեռքբերումն ու բաշխումն է: Այդպիսի հնարավորությունն ընձեռում է 1972 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի ընդունած «էթնիկական մշակութային ժառանգության և ամերիկյան ազգի ձևավորման գործում էթնիկական տարբեր խմբերի ներդրման ուսումնասիրության մասին» օրենքը, որով նախատեսվում էր դաշնակցային միջոցներ հատկացնել բուհերում էթնիկական ժառանգության ուսումնասիրման ֆակուլտետների և միջնակարգ ուսումնական հաստատություններում համապատասխան դասընթացների և ծրագրերի ստեղծման համար<sup>8</sup>:

Կազմակերպությունը բազմակողմանի աջակցություն է ցուցաբերում հայկական հաստատություններին՝ նպաստների ձեռքբերման համար համապատասխան դիմումների պատրաստման, դաշնակցային գործակալությունների հետ հաղորդակցվելու և անհրաժեշտ բանակցություններ վարելու գործում: Այսպես, հիմնադրամի եռանդուն ջանքերի շնորհիվ 1977 թ. ԱՄՆ-ի առողջապահության, կրթության և ապահովության նախարարությունը 107.000 դոլարի նպաստ տրամադրեց Մասաչուսեթս նահանգի Ուոթերթաուն քաղաքում հայ կրթական երկլեզու ծրագրի համար<sup>9</sup>: 1970-ական թթ. սկզբներին երկլեզուության հայեցակարգի պաշտոնական հավանությունը կարևոր քայլ էր էթնիկական բազմազանության ճանաչման ուղղությամբ: Սկզբնապես երկլեզու ուսուցումը նախատեսվում էր անգլերեն լեզվին վատ տիրապետողներին աջակցելու համար: Սակայն, 1970-ական թթ. սկզբներին ամերիկյան իշխանությունների վրա ազգային փոքրամասնությունների (հատկապես՝ իսպանախոս) ճնշման և երկլեզու ուսուցման մասին օրենքների ընդունման արդյունքում երկլեզուության հայեցակարգը էապես ընդլայնվեց՝ օժանդակ ծրագրերից մինչև ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի և պատմական ժառանգության ուսումնասիրումը: Վերոհիշյալ նպաստը նախատեսված էր մի քանի տարվա համար, և Ուոթերթաունի դպրոցներում հայոց լեզվի դասավանդման համար հատկացված նպաստի վերջնական գումարը կազմեց 500.000 դոլար<sup>10</sup>:

1978 թ. կազմակերպությունը Ազգային մարդասիրական հիմնադրամի խողովակով 108.000 դոլարի նպաստ ապահովեց Սթանֆորդի (Կալիֆոռնիա) համալսարանում հայոց լեզվի համակարգչային ուսուցման համար<sup>11</sup>: Նույն ծրագրի շրջանակներում Հայկական համագումարն ապահովեց ևս 31.000 դոլարի նպաստ՝ կրկին Ազգային մարդասիրական հիմնադրամի խողովակով<sup>12</sup>: Ինչպես այս առիթով արտահայտվել է ամերիկահայ նշանավոր պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը՝ «հայոց լեզվի ուսուցումը համակարգիչների միջոցով մեծ բեկում է հայ կրթական ծրագրի զարգացման գործում»<sup>13</sup>:

Հայոց լեզվի ու մշակույթի պահպանման համար կարևոր նշանակություն ունեցավ նաև 1981 թ. Հայկական համագումարի տեղեկատվական կենտրոնի հրատարակած «Հայոց լեզվի համեմատական վերլուծություն ձեռ-

<sup>8</sup> Տե՛ս Н. А. Геевский, С. А. Червоная, Национальный вопрос в общественно-политической жизни США, М., 1985, էջ 134:

<sup>9</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1977, June 23:

<sup>10</sup> Տե՛ս «A. A. A. Aims and Accomplishments», էջ 14:

<sup>11</sup> Տե՛ս «Asbarez», 1979, March 21:

<sup>12</sup> Տե՛ս «A. A. A. Aims and Accomplishments», էջ 14:

<sup>13</sup> «The Armenian Reporter», 1978, June 29:

Նարեկը», որտեղ համառոտ տեղեկություններ կան հայոց լեզվի այբուբենի, բարբառների, հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության վերաբերյալ<sup>14</sup>:

Կարծում ենք, ավելորդ չէ ընդգծել հայոց լեզվի ու մշակույթի պահպանման կարևորությունն ու անհրաժեշտությունը նոր սերնդի հայեցի դաստիարակության և հայապահպանության գործում մի այնպիսի ձուլարանում, ինչպիսին է ԱՄՆ-ը: Եվ որքան ավելանա հայոց լեզվի, մշակույթի ու պատմության դասավանդման ծրագրերի թիվը, այնքան մեծ են լինելու ամերիկահայության կարողությունները՝ պայքարելու ձուլման և այլասերման ահավոր հորձանքի դեմ, որն սպառնում է հայ մշակույթին ու բարոյական արժեքներին: Հանրաճանաչ է, որ Հայ եկեղեցին «միջնաբերդն է հավատքի», բայց հայ կրթական ու մշակութային հաստատությունները այն պարսպապատող ու պաշտպանող ամրություններն են, որտեղ դարբնվում է ամերիկահայ նոր սերունդը: Այդ նոր սերունդն է ապագայում ստանձնելու հայոց լեզուն, հարուստ մշակույթը, ազգային ավանդույթներն ու սովորույթները և պատմական անցյալը անաղարտ ու վառ պահելու պատասխանատվությունը:

1978 թ. ԱՄՆ-ի կառավարության Ազգային մարդասիրական հիմնադրամը 110.000 դոլարի նպաստ տրամադրեց Հայկական համագումարին՝ «բանավոր պատմության ծրագրի» իրականացման համար, որով նախատեսվում էր արձանագրել Հայոց ցեղասպանությունը վերապրողների ինքնակենսագրություններն ու շարդերի մասին նրանց հուշերն ու վկայությունները<sup>15</sup>: Հիմնադրամի խնամակալներն արդյունավետ հանդիպումներ էին ունեցել համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների հետ և 22.000 դոլար էին նվիրաբերել ծրագրի սկզբնական աշխատանքներն ապահովելու նպատակով<sup>16</sup>: Հետազոտությունն իրականացնում էին փորձված և հմուտ մասնագետները, որոնք այցելում էին վերապրող-ներգաղթողների տները և ժապավենների վրա ձայնագրում նրանց հուշերը նախկին գյուղական կյանքի, տեղահանությունների ու կոտորածների և Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մասին: Հարցման մասնակիցները, ինչպես նաև ԱՄՆ-ի ամբողջ հայ համայնքը, մեծ խանդավառությամբ ընդունեցին «բանավոր պատմության ծրագիրը», քանի որ վերջապես պետք է փաստագրվեին 1915—1923 թթ. հայերի ցեղասպանության վերապրողների անձնական հուշերն ու վկայությունները: Այդ ծրագրի վերջնական արդյունքում ստեղծվեց անգլալեզու գրադարան-արխիվ, որտեղ պահվում են ավելի քան 600 բանավոր վկայությունների ժապավեններն ու արձանագրությունները և դրանց հետ կապված բազմաթիվ լուսանկարներն ու փաստաթղթերը: Հայերենից անգլերեն են թարգմանվել հուշագրությունների շուրջ 500 ժամ տևողությամբ ժապավենները<sup>17</sup>: Այսպիսով, Հայկական համագումարը տարիների քրտնաջան աշխատանքով նպաստեց արժեքավոր հուշագրերի ու փաստագրական նյութերի հսկայական մի պահեստարանի ստեղծմանը, որը գիտատեղեկատվական և աղբյուրագիտական մեծ արժեք է ներկայացնում գիտնականների և հետազոտողների համար:

1982 թ. Ազգային մարդասիրական հիմնադրամի խողովակով ԱՀՀ-ն ստացավ ևս 10.288 դոլարի նպաստ՝ ամերիկահայ հուշակավոր գրող Վիլյամ

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, 1981, December 10:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, 1978, February 2:

<sup>16</sup> Տե՛ս «Asbarez», 1979, March 21:

<sup>17</sup> Տե՛ս «The Armenian Weekly», 1980, April 19:

Սարոյանի արխիվային նյութերը, հուշամատյանները, գրական և անձնական իրերը և ամբողջ շարժական գույքը Փարիզից Ֆրեզնո տեղափոխման համար<sup>18</sup>։ Հայտնի է, որ 1960 թվականից մինչև իր մահը՝ 1981 թ. մայիսը, ականավոր գրողի ստեղծագործական կյանքն անցել էր Փարիզում և Ֆրեզնոյում։ Նրա Փարիզի բնակարանում էին գտնվում վերջին քսան տարիներին տարբեր լեզուներով հրատարակված նրա բոլոր գրքերը, անձնական նամակագրությունը, բազմաթիվ նկարները։ Մահից առաջ՝ 1980 թ. աշնանը, մեծ վարպետը ցանկություն էր հայտնել Փարիզից Ֆրեզնո տեղափոխել իր անձնական իրերն ու գրադարանը, սակայն վաղաժամ մահը թույլ չտվեց այդ աշխատանքն ավարտել նրա կենդանության օրոք։ Ազգային մարդասիրական հիմնադրամից ստացված նպաստը հնարավորություն տվեց ավարտել Սարոյանի բնակարանի գույքի ցուցակագրումը և Ֆրեզնո տեղափոխել նրա գրադարանն ու անձնական իրերը։ Ծրագիրն իրագործվել էր Ֆրեզնոյի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ և Սարոյանի անձնական ընկեր ղոկտոր Տիգրան Կուլմջյանի և «Վիլյամ Սարոյանի հիմնադրամի» անմիջական ջանքերով։ ԱՀՀ-ի այդ ծրագիրը կարևոր քայլ էր սփյուռքահայ մշակութային արժեքների պահպանության գործում, քանի որ այն հնարավորություն տվեց հավաքել, պահպանել և ապագա սերունդներին փոխանցել հուշակավոր գրողի ստեղծագործական հարուստ ժառանգությունը։

Հայկական համագումարը կազմակերպել է նաև մի շարք գիտաժողովներ, որոնք շոշափում էին ինչպես ամերիկահայ համայնքի, այնպես էլ ամբողջ Սփյուռքի զանազան խնդիրներ։ Այսպես, 1981 թ. հիմնադրամի Կալիֆոռնիայի խորհուրդն անցկացրեց գիտաժողով՝ «Հայերն ուսունականներին. հեռանկարներ և հավակնություններ» թեմայով, որին մասնակցում էին ամերիկահայ մի շարք ականավոր գիտնականներ<sup>19</sup>։ Սեպտեմբերի 11—13-ին Բերկլիի համալսարանում (Կալիֆոռնիա) տեղի ունեցած գիտաժողովում քննության էին առնվել շոքս հիմնական ենթահարցեր, որոնց վերաբերյալ մասնակիցները լսեցին նախօրոք պատրաստված զեկուցումներ, իսկ այնուհետև տեղի ունեցան աշխույժ քննարկումներ։ Կոնֆերանսի առաջին նիստը նվիրված էր ամերիկահայ համայնքի զարգացման հեռանկարներին։ Այս հարցի վերաբերյալ հիմնական զեկուցողը անգլալեզու «Արմենիան Միտո-Սփեթթեյթոր» շաբաթաթերթի խմբագիր Բարբարա Մերգերյանն էր։ Գիտաժողովի երկրորդ նիստում քննության առնվեց Հայկական համագումարի դերը 80-ական թվականներին, որի մասին զեկուցմամբ հանդես եկավ Լոս Անջելեսի համալսարանի հայոց պատմության պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը։ Երրորդ նիստի գլխավոր զեկուցողը Ամերիկահայ միջազգային քոլեջի հայոց պատմության և մշակույթի պրոֆեսոր Ժիրայր Լիպարիտյանն էր, որն անդրադարձավ ամբողջ Սփյուռքի զարգացման հեռանկարներին։ Չորրորդ՝ եզրափակիչ նիստը նվիրված էր Հայ Դատի լուծման հեռանկարներին, իսկ գլխավոր զեկուցողն էր պրոֆեսոր Զիվան Թաբաբյանը։

1982 թվականի ապրիլին տեղի ունեցած գիտաժողովի թեման էր «Հայերը Կալիֆոռնիայում. էթնիկական ինքնապահպանությունը և ասիմիլյացիան», որը նույնպես կազմակերպել էր ԱՀՀ-ն՝ Սան Ֆրանցիսկոյի հանրային գրադարանում համանուն խորագրով տեղի ունեցած ցուցահանդեսի նախօրեին<sup>20</sup>։ Գիտաժողովին մասնակցում էին ինչպես հայ, այնպես էլ օտարազգի աչքի ընկնող գիտնականներ, որոնք քննության էին առել Կալիֆոռ-

<sup>18</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1982, May 6:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, 1981, June 25:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, 1982, May 27:

նիայի հայերի (ինչպես նաև ընդհանրապես ամերիկահայ համայնքի) ազգային ինքնության ու մշակույթի պահպանման ուղիները և շրջապատող միջավայրի ասիմիլյացիոն ազդեցությունից պաշտպանվելու արդյունավետ միջոցները: Գիտաժողովի ընթացքում զուգահեռներ և համեմատություններ էին արվում էթնիկական մյուս խմբերի հետ և ընդգծվում էր, որ «Ամերիկայում արագրեթաց մշակութային և սոցիալական փոփոխությունների պայմաններում էթնիկական ինքնության պահպանումը նպաստում է բարեկեցությունն ու կայունությունը»<sup>21</sup>:

1982 թվականի հոկտեմբերին կազմակերպվեց ևս մեկ գիտաժողով՝ «Հայ ուսանողները հանրային դպրոցներում» թեմայով, որին մասնակցում էին հայ համայնքի շուրջ 90 ներկայացուցիչներ՝ դպրոցների և քոլեջների տնօրեններ, մանկավարժներ, գիտնականներ, ինչպես նաև Լոս Անջելեսի, Պասադենայի և Գլենդեյլի քաղաքային, կրթական ղեկարտամենտների պաշտոնյաներ: Գիտաժողովի հիմնական նպատակն էր «բարձրացնել համայնքի իրազեկությունն ու շահագրգռությունը հանրային կրթական համակարգում հայ ուսանողների թվի աճի առնչությամբ»<sup>22</sup>: Մասնավորապես նշվում էր, որ «չնայած Կալիֆոռնիայում հայկական ցեղեկային դպրոցների թվի աճին՝ հայ ուսանողների մի ստվար զանգված շարունակում է ուսանել հանրային դպրոցների համակարգում»<sup>23</sup>: Գիտաժողովի մասնակիցները մտքեր էին փոխանակում հայ կրթական գործը բարելավելու և ամերիկահայերի կրթությանը նպաստելու հնարավոր ուղիների վերաբերյալ:

Հայկական համագումարի նմանատիպ գիտաժողովներն ունեին կարևոր նշանակություն հայապահպանության գործում և կոչված էին ծառայելու ծուլման ահավոր վտանգին դիմակայելու ամերիկահայության կարողությունների բարձրացման նպատակին:

Հայկական համագումարը հատկապես նկատելի գործունեություն ծավալեց 1982 թվականի հունիսին Թեյ Ավիվում ողջակիզման և ցեղասպանության հարցերին նվիրված գիտաժողովի կազմակերպման առնչությամբ՝ ապահովելով ամերիկահայ բազմաթիվ գիտնականների մասնակցությունը<sup>24</sup>: Գիտաժողովն անց էր կացվում ոչ պաշտոնական մակարդակով, որին մասնակցում էին շուրջ 200 գիտնականներ աշխարհի տարբեր երկրներից: Հայ գիտնականների պատվիրակությունը ղեկավարում էր Հայկական համագումարի գործադիր մարմնի անդամ, Ցեղասպանության հարցերի կոմիտեի նախագահ և ԱՄՆ-ի Ողջակիզման հիշատակման խորհրդի անդամ Սեթ Մոմջյանը: Պատվիրակության կազմի մեջ էին մտնում նաև Ռիչարդ Հովհաննիսյանը, Վահագն Դադրյանը, Ավետիս Սանջյանը, Լեո Համայանը, Վիգեն Գուրոյանը, Ռիչարդ Տեկմեճյանը, Վահե Օշականը, Հայկազ Գրիգորյանը, Ալան Սալերյանը, Մարջորի Հովսեփյան-Դոբկինը, Ռոնալդ Սյունին, արքեպիսկոպոս Շահե Աճեմյանը: Կոնֆերանսի աշխատանքները լուսաբանելու համար ժամանել էին նաև լրագրողներ Բարբարա Մեդգերյանը («Արմենիան Միրոր-Սփեթթեյթոր») և Էդվարդ Պողոսյանը («Արմենիան Ռիփորթեր»):

Հարկ է նշել, որ թուրքական կառավարությունը մեծ ճնշում էր գործադրել Իսրայելի իշխանությունների վրա՝ բողոքելով հայ գիտնականների մասնակցության դեմ և պահանջելով շեղյալ հայտարարել գիտաժողովը: Թուրքական իշխանությունները Իսրայելի կառավարությանը տեղեկացրել էին, որ

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում, 1982, September 30:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Նույն տեղում, 1982, June 10:



գիտաժողովի ընթացքում «Հայոց ցեղասպանության հարցի բարձրացումը աղետալի հետևանքներ կունենա Թուրքիայի հրեական և հայկական համայնքների, Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերությունների և իհարկե գիտաժողովի բոլոր մասնակիցների համար»<sup>25</sup>։ Արդյունքը եղավ այն, որ Իսրայելի կառավարությունը և կառավարական կամ կիսակառավարական այնպիսի հաստատությունները, ինչպիսիք էին ԹԷԼ Ավիվի համալսարանն ու Երուսաղեմի «Յադ վաշեմի Ողջակիզման հիշատակման ինստիտուտը» հրաժարվեցին մասնակցել գիտաժողովի աշխատանքներին։ Հայկական համագումարն ակտիվ արշավ կազմակերպեց Թուրքիայի հակահայկական գործողություններին հակազդելու համար։ Կազմակերպության տարածած հայտարարության մեջ բոլոր պետություններին ու կազմակերպություններին կոչ էր արվում «դատապարտել Թուրքիայի կողմից մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումը»<sup>26</sup>։ Համանման հայտարարությամբ հանդես եկավ նաև Սեթ Մոմջանը, որը Թուրքիայի գործողությունները որակեց «պետական ահաբեկչություն»<sup>27</sup>։ Այս երկու հայտարարություններն ուղղարկվեցին ԱՄՆ-ի կոնգրեսի անդամներին և հրեական ու ամերիկյան մամուլին։ Բացի այդ, կազմակերպության ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան մի շարք կոգրեսմենների հետ՝ նրանց ուշադրությունը հրավիրելով Հայոց ցեղասպանության փաստը մերժելու Թուրքիայի փորձերի վրա՝ դրանք որակելով որպես միջազգային շանտաժի ցայտուն օրինակ<sup>28</sup>։

ԹԷԼ Ավիվի միջազգային գիտաժողովում քննության էին առնվել ցեղասպանության դեպքերի հետ առնչվող բազմաբնույթ հարցեր, ինչպես նաև այն ուղիներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են հետազայում ցեղասպանությունները կանխելու համար։ Մասնավորապես, անդրադառնալով 1915—1923 թ. հայերի ցեղասպանությանը՝ մասնակիցները ուղղակի զուգահեռներ անցկացրին 1933—1945 թթ. հրեական ողջակիզման հետ և նշեցին, որ եթե միջազգային հանրությունը ժամանակին դատապարտեր 1915 թ. Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրագործված ոճրագործությունը և մեխանիզմներ ստեղծեր ցեղասպանության կանխարգելման համար, ապա չէին լինի նաև նացիստների իրականացրած հրեական ցեղասպանությունը և ցեղասպանությունների այն բոլոր դեպքերը, որոնք տեղի ունեցան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (օրինակ՝ պոլյոտականների կողմից իրագործված կամբոջացիների ցեղասպանությունը)<sup>29</sup>։

Այս գիտաժողովը մեծ նշանակություն ուներ համայն հայության համար, քանի որ առաջին անգամն էր Հայոց ցեղասպանության հարցը քննարկվում այդպիսի խոշոր մասշտաբի միջազգային գիտաժողովում, և, որ ոչ պակաս կարևոր է, սփյուռքահայ անվանի գիտնականները հնարավորություն ունեցան մտքեր փոխանակել ցեղասպանության խնդրի վերաբերյալ և գիտական լայն շրջանակների ուշադրությանը ներկայացնել Հայերի ցեղասպանության հետ առնչվող հիմնական խնդիրները։ Գիտաժողովը հնարավորություն տվեց ոչ միայն մեկ անգամ ևս հասարակական ուշադրությունը բևեռել Հայկական հարցին, այլև միջազգային հանրությանը ներկայացնել Հայ Դատի խնդիրը և հայ ժողովրդի արդարացի ձգտումները։

Ամփոփելով 1972—1982 թթ. Հայկական համագումարի իրականացրած գիտահետազոտական և կրթամշակութային գործունեությունը՝ վստահությամբ

<sup>25</sup> Նույն տեղում։

<sup>26</sup> Նույն տեղում։

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը։

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը։

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը, 1982, July 22։

կարելի է նշել, որ արդեն այդ տարիներին Հայկական համագումարը հանդես էր գալիս որպես ոչ միայն ԱՄՆ-ի, այլև ամբողջ Սփյուռքի հայագիտական խոշոր կենտրոններից մեկը: Նրա իրականացրած բազմաթիվ հայանըպաստ ու ազգօգուտ ծրագրերն արժեքավոր ներդրում են Միացյալ Նահանգներում և ամբողջ Սփյուռքում հայկականության ու հայ ազգային արժեքների պահպանության գործում: Կազմակերպությունը նաև անգնահատելի ավանդ ունի հայոց պատմության, լեզվի ու մշակույթի, ընդհանրապես հայ ժողովրդի և հայկական հաստատությունների վերաբերյալ ճշգրիտ և պատշաճ տեղեկատվության տարածման ասպարեզում: Օգտագործելով ամերիկահայ համայնքի գիտակրթական ներուժը՝ ԱՀՀ-ն խորացնում է համագործակցությունը հայագիտական տարբեր հաստատությունների հետ՝ սերտ կապեր պահպանելով հայագիտական ամբիոնների, գիտակրթական հաստատությունների, Հայկական ուսումնասիրությունների ու հետազոտությունների ազգային ընկերության (ՆԱԱՍՐ) և առանձին գիտնականների հետ: Գիտահետազոտական ծրագրի շրջանակներում Հայկական համագումարը նաև նպաստել է Հայրենիք—Սփյուռք կապերի ամրապնդման գործին՝ ակտիվորեն աջակցելով հայ գիտնականների փոխանակման ծրագրերին Խորհրդային Հայաստանի և ամերիկահայ գիտակրթական հաստատությունների միջև: Այդ աշխատանքները հատկապես լայն թափ ստացան 1982 թվականից հետո և իրագործվում էին Գիտնականների փոխանակման միջազգային խորհրդի հետ սերտ համագործակցությամբ<sup>30</sup>:

Իր տեսակի մեջ միակը լինելով՝ Հայկական համագումարն առանձնահատուկ տեղ է գրավում ամերիկահայ հասարակական բազմաթիվ կազմակերպությունների շարքում: Աստիճանաբար ընդլայնելով իր բազմաբնույթ արգասաբեր աշխատանքները՝ կազմակերպությունը սկսում է վայելել նաև ամերիկյան հասարակության ու կառավարության աճող վստահությունը: Դրա վառ ապացույցն է այն հանգամանքը, որ հենց Հայկական համագումարն էր ստանում և բաշխում հայագիտական հետազոտությունների և կրթության համար նախատեսված դաշնակցային ֆինանսական հատկացումների մեծ մասը: Եվ արդեն 1980-ական թթ. սկզբներին, ընդլայնելով իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակը, Հայկական համագումարը դարձել էր ոչ միայն ամերիկահայ համայնքի, այլև ամբողջ Սփյուռքի ամենաազդեցիկ կազմակերպություններից մեկը:

**К. Р. НАГАПЕТАН**—Научно-образовательная и культурная деятельность Армянской Ассамблеи Америки (1972—1982 гг.)—Крупные сдвиги в этнической жизни США в начале 1970-х годов, в частности принятие законодательства, способствующего социально-культурному развитию этнических меньшинств, значительно активизировали общественно-политическую и культурно-образовательную деятельность армянской общины США. Рост этнического самосознания и растущий интерес к национальным ценностям значительно расширили возможности армянской общины по борьбе с угрозой ассимиляции и вызвали необходимость сохранения армянских национальных ценностей, культуры и языка. Среди различных организаций, деятельность которых ориентирована на сохранение и распространение армянской культуры и духовных ценностей, особое место занимает созданная в 1972 г. Армянская Ассамблея Америки. Организация финансирует исследовательские работы, в том числе сбор различного рода мате-

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը, «The Armenian Reporter», 1980, August 7:

риалов, составление документов, справочников, учебников по истории и культуре армянского народа. Преимущество отдается анализу и оформлению материалов о Геноциде армян 1915 г., политике Турции по отношению к армянам, перспективам развития армянской общины США и армянской диаспоры вообще. Армянская Ассамблея также получает и распределяет часть федерального субсидирования на образование и исследовательские работы по армянской культуре, организует научные конференции и симпозиумы по различным темам и т. д. Таким образом, Армянская Ассамблея Америки является одним из крупных арменоведческих центров армянской диаспоры. Используя научно-образовательный потенциал армянской общины США, организация углубляет взаимодействие и сотрудничество с различными арменоведческими учреждениями, развивая тесные связи с арменоведческими кафедрами, научно-образовательными институтами, Национальной ассоциацией арменоведческих исследований (НААСР) и отдельными учеными.